

Բ. ՄԱՍ

ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ
ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE DE LA FONDATION CALOUSTE GULBENKIAN

MESROP MAGISTROS TER-MOVSISIAN

CATALOGUE
DES MANUSCRITS ARMÉNIENS

DE MEGUERTITCH SANASARIAN



VENISE - ST. LAZARE

1981

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏՆՆԱՇԱՐ ԳԱՂՈՒՄՑ ԿԻՒՂՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ

ՅՈՒՅԱԿ
ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՅ

ՄԿՐՏԻՉ ՍԱՆՍԱՐԵԱՆԻ



ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1981

CATALOGUE
DES MANUSCRITS ARMENIENS

DE MEGUERTITCH SANASARIAN

PAR

MESROP MAGISTROS TER-MOVSISIAN

(SAINT-PETERSBOURG, 1901)

RÉDACTION

ET PRÉPARATION DES TABLES

PAR

Y. H. VARDANIAN


ՅՈՒՅԱԿ
ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ

ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍՐԵԱՆԻ

ԿԱԶՄԵՑ
ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ
(ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1901 թ.)

ԽՄԲԱԳՐԵՑ
ԵՒ
ՅԱՆԿԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ
Յ. Հ. ՎԱՐԳԱՆՆԵԱՆ

87562-42



253-97

ԱՌԱՋԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Մեսրոպ (Փարսապան) Վարդանի Տէր-Մովսիսեանը (1865-1939) նախորդ դարի վերջի եւ ներկայ դարի սկզբի էջմիածնի կրթուած հայազէտ-հոգեւորականներէց էր, մէկը նրանցից, որոնց շնորհիւ հայրենի հողի վրայ ստեղծուեց դարաւոր ասանդներ ունեցող Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնների մակարդակին հաստատ հայազգիտական նոր կենտրոն: Այդ շրջանում, անկախ երբեմն ծագող դժուարութիւններից, էջմիածինը տուեց դիտական զգայի արտադրանք, եւ այդ արտադրանքի մէջ կարեւոր տեղ են զբաղեցնում նաեւ Մեսրոպ Մաղիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեանի որոշ ուսումնասիրութիւններ: Նրա կենսւթի, դիտական ժառանգութեան եւ այդ ժառանգութեան մէջ կարեւորութեամբ առանձնացող «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց»¹ քննութիւնը եւ գնահատութիւնը դուրս է մեր խնդիրներից, ուստի թաւարարուենք «Ընդհանուր ցուցակ»ի, որից հանուած են սոյն հաւաքածոթի ձեռագրերի նկարագրութիւնները, կատուցումքի մասին անհրաժեշտ մի լացատրութեամբ:

Այս ծաւալուն աշխատանքը կազմուած է առարկայական սկզբունքով եւ ունի երկու մեծ բաժին. Ա. Ծիտական գրքեր եւ ժողովածուներ, Բ. Մատենագիրներ: Առաջին մասում ժամանակագրական կարգով առանձին թրդ-թարանակներում դասաւորուած են որեւէ ծիտական-պաշտամունքային գրքի բոլոր աւն ձեռույրների նկարագրութիւնները, որոնք հասու են եղել հեղինակին մասնագիտական գրականութեան միջոցով կամ անձամբ տեսած եւ նկարագրած լինելով: Երկրորդ մասի վառուցման առաջին սկզբունքը հեղինակ-մատենագիրների անունների այբբենական դասաւորութիւնն է: Իւրաքանչիւր անուան ներքոյ ժամանակագրական կարգով տրուած են այդ հեղինակի անուամբ մեզ հասած գործերի Մաղիստրոսին յայտնի ձեռագրերը: Այս իսկ պատճառով, որեւէ առանձին հաւաքածոթի մասին պատկերացում կազմելու համար, ուսումնասիրողը պարտաւոր է թերթից հակայական ծաւալ այս գործի բոլոր բաժիններն ու թղթարկանները: Հետեւաբար, Մրկրտիչ Սանասարեանի ձեռագրերի նկարագրութիւնները հանել ենք «Ընդհանուր ցուցակի» ամենատարբեր մասերից, ի մի բերել եւ միայն դրանից յետոյ ձեռնարկել նրանց հրատարակութեան պատրաստելու աշխատանքին:

1. Հեղինակի ժահուանից յետոյ թերի վիճակում տարուել է ՀՍՍՀ 9-Ա Պատմութեան հիմնարկ եւ կազմել վերջինիս դիւանի 201-287 համար գործերը: 1980-ական թուականներին տեղափոխուել է Մալոդեան Մատենադարան եւ այժմ այստեղ պահպանուած է Անտիպ ձեռագրացուցակների հաւաքածուի 133 համարի ներքոյ:

Մատենադարանի տնօրինության յանձնարարության մեջ Մաղխատրոսի ցուցակից այժմ քաղում են տոտնանագրում ենք մասնաւոր անձանց եւ եկեղեցիների սեպհականութիւն եղած այն ձեռագրերի անձամբ սրած նկարագրութիւնները, որոնք յետագայում չեն մտել Մաղխատրոսի Մատենադարանի կամ այլ խոշոր հաւաքածոների մէջ եւ ուրիշ նկարագրութեամբ յայտնի չեն հայագիտութեանը: Մանասարեանի ձեռագրերի այս ցուցակի սկզբունքներով ապագայում հրատարակութեան ենթ պատրաստելու նաեւ այդ տիպի ձեռագրերի ցուցակը:

ՄԿԳՏԻՁ ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՒԱՔԱԴՐՈՒՄ

ԵՒ ՆՐԱ ՑՈՒՑԱԿԻ ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Իր ցուցակի առաջաբանատիպ մասի սկզբում Ս. Մաղխատրոսը գրում է. «1901-1902 թթ. Պետերբուրգում էի: Այդ քաղաքում, զանազան հիմնարկներում կային քաղական թուով հայերէն ձեռագրեր: ... 100ից աւելի ձեռագրեր կային Կ. Եղեանի մօտ, զնուած Սանասարեանի դրամով, նրա անունով էր գրում: Գոյութիւն ունեցող Սանասարեանի զպրոցքի մատենադարանի համար: Այդ բոլորը եւ ցուցակագրեցի: Այս տոթիւ պիտի յիշեմ ի խիստ ցաւալի դէպք: Եղեանը հէնց նորի ամառը քաղաքից հեռանալու պատճառով, իր մօտ գտնուած ձեռագրերը ապահով արկղերում յանձնել էր քաղաքի ապահովութեան պահեստների մէջը՝ ի պահ, մինչեւ իր վերադարձը, որտեղ, հրդէհ էր պատահել եւ այդ արեւելքաւոր ժողովածուն ամբողջովին վատուել էր»²:

Այս ձեռագրերի եւ նրանց դժբախտ ճակատագրի մասին կան այլ հարգողութիւններ եւս. «Բեթրարուրկի մէջ պահուած են 4348 հատոր գիրքեր հայերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն եւ ռուսերէն, տպագիր եւ ձեռագիր, որոնք Մկրտիչ Սանասարեանցի անձնական մատենադարանը կը պարփէին, եւ վարժարանին փտակուած են»³, եւ՝ «1903ին այրեցան Բեդրարուրկի մէջ պահուած վարժարանին սեփական 4348 հատոր ընտիր գրքերն ու ձեռագրերն, որոնք ապահովագրուած էին»⁴:

Մ. Մաղխատրոսի եւ վարժարանի տեղեկագրերի հաղորդումների միջեւ հակասութիւն կայ միայն հրդէհի ժամանակի հարցում: Մեզ որոշակիօրէն յայտնի է որ ձեռագրերը նկարագրուել են 1901 թ. մայիսից առաջ⁵ եւ Մաղխատրոսի բերուած խօսքից կարող է թուալ, թէ ձեռագրերը վառուել են 1901 կամ, ծայրայիշ դէպքում, 1902 թ. ամռանը: Նկատի ունենալով, որ մեր հեղինակի ցուցակի առաջաբանը գրուել է 1930ական թուականներին, երբ ժամանակին արդէն քաղաքին առաջ էր անցել եւ նա կարող էր տրեքան էլ յստակ չլիւշել, պէտք է հաւատ ընծայել վարժարանի տեղեկագրի հաղորդմանը ևւ ընդունել, որ ձեռագրերը հրդէհի ճարակ են դարձել 1903 թ. ամռանը:

2. ՄԵՐԱՐՈՒՄ ՏԵՐ-ՄՈՒՍԻՍԵԱՆ, Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց - Մատենագիտութիւն հայերէն ձեռագրերի ուսումնասիրութեան եւ ցուցակագրութեան, էջ 1. Մաղխատրոս Մատենադարանի Անտիպ ձեռագրացուցակների նախաբան, N° 133:

3. Փամամեայ տեղեկագիր Սամասարեան վարժարանի 1881-1901, Կ. Պոլս, 1903, էջ 68:

4. Հնգամեայ տեղեկագիր Սամասարեան վարժարանի 1901-1908, Կ. Պոլս, 1908, էջ 55:

5. Հմտ. Ընդհանուր ցուցակ. Մատենագիտութիւն, էջ 1 եւ մեր հրապարակած Մեքսիկայի Տէր-Մոսիսեանի նամակները Կարապետ Եղեանին - ՀԱՅ ԳԻՒ Լրագիր հասարակական գիտութիւնների, 1977 թ. N° 10, էջ 91-92:

1904 թ. տպագրած մի յօդուածում, որտեղ շրջանի մասին խօսք չկայ, Մազիստրոսն ասում է, թէ «Ալիդըը նոյն իսկ պ. Եղեանին յայտնի չէր ձեռագրերի թիւը, որ տարիների ընթացքում հանուշեայ Սանասարեանի կենդանութեան օրով, փոքր առ փոքր, ըստ մեծի մասին փողով, Էրեւան նաեւ ընծայարկութեամբ, ձեռք էին բերուել: Ձեռագրերի թիւը հասնում է 189ի, հետն էլ հանուած Սանասարեան վարժարանում դառնաձնէրը, որոնցից 43 համարը արդէն ցուցակադրուած եւ ցուցակն էլ տպուած է պ. Հ. Աճառեանի ձեռքով»⁶: Նախապէս ասենք, որ «Ընդհանուր ցուցակ»ում ճշգրտելու ենք խնդրոյ առարկայ հաւաքածուի 121 միասորի նկարապրութիւն: 1901 թ. Սանասարեան վարժարանը Կարինում ունէր 66 ձեռագիր⁷: Այս պարագայում կամ պէտք է ենթադրել, որ Մ. Մազիստրոսը զիտէր եւս Էրկու ձեռագրի աւելացած լինելու մասին, որը հետութեամբ կարելի կը լինէր պարզել, Էթէ վարժարանի տեղեկապրութեմը զետեղուած ձեռագրերի համառոտ ցանկերում նշանակուած լինէր իւրաքանչիւր ձեռագրի մուտքի տարեթիւր, կամ էլ, որ քիչ հաւանական է, «Ընդհանուր ցուցակ»ից թերթեր ընկած լինելու կամ այլ պատճառով մեր ուշադրութիւնից վրիպել է Էրկու ձեռագրի նկարապրութիւն:

Վստահ ենք, որ Մազիստրոսն փնքն է համարակալել Սանասարեանի հաւաքածուն⁸ եւ Հ. Աճառեանի նկարադրած 43ի հետ իրեն, հաւանաբար, յայտնի նկարապրութեւ 25ր կամ 23ր դնելու դէպքում նա պէտք է սխալը 69 կամ 67 համարից եւ, առանց կրկնութիւնների կամ թռիչքների, վերջացնէր 189 համարով: Իսկ իրականում հակառակն է. շատ են եւ թռիչքները եւ կրկնութիւնները: 25ից անցնում է 29, 29ից՝ 40, ապա՝ 44, 52, 55 եւ այլն, իսկ 66, 69, 70, 71, 72, 93, 95, 98, 104, 115, 116 եւ 170 համարների ներքոյ նկարապրութեւ Լն իրարից տարբեր Էրկուական ձեռագիր: Մտածելով, որ Եղեանը չի ունեցել այս ձեռագրերի ցուցակը եւ նկարապրութեւց յետոյ կը ցանկանար ունենայ նրանց թէկուզ ամենահամառոտ ցանկը, այդպիսի ցանկ փնտռելիք ՍԱՄ ՌԱ Արեւելապիտանութեան հիմնարկի Լենինգրադի բաժանմունքում պահպանուող նրա դիւանում, յայց մեր փնտռութիւնը ապարդիւն եղաւ: Կարելի էր մտածել նաեւ, թէ առարկայական բաժանման հիման վրայ մտովի համարներ էր նշանակել Կարինում եղած ձեռույրերին եւ միայն դրանից յետոյ արել Պետրոպոլի ձեռագրերի համարադրումը, յայց այս կարծիքը եւս անհիմն էր: Ուստի ստիպուած եղանք, նկարապրութիւնների մէջ հին համարները պահպանելով՝ շնչեղմը, նշանակել նոր եւ կանոնաւոր համարներ՝ 1-121:

6. ՄԵԱՐՈՊ ԱՐԳԱՊԵՏ. Ներսէս Իինգիբորդ կաթողիկոսի կոնգրակները. «Արարատ», 1904.

7. 317: Հ. Աճառեանի ցուցակը տե՛ս Ռուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին, կազմեց Հրաչեայ Թ. Աճառեան, Վիեննա, 1900 (նաեւ՝ «Հանգէս Ամսօրեայ» 1896-1897 թթ. համարներում):

8. Տե՛ս Քառամասյ տեղեկագիր..., էջ 72-75:

9. Անդ: Տե՛ս նաեւ ՀԱՐԱՄԻԱ տեղեկագիր..., էջ 60-61 եւ՝ Քառամասյ տեղեկագիր Սանասարեան վարժարանի 1906-1910. Ղալաթիւ (Կ. Պոլիս), 1911. էջ 40-41: Հ. Աճառեանց յետոյ աւելացած ձեռագրերի (№№ 44-94) ցուցակը կազմել է Հ. Թ. Քառանդ. Յուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին, «Հանգէս Ամսօրեայ», 1912, էջ 55-61. 1921, էջ 173-181, 480-493, 580-584 (Առաձեմին տպագրութիւնը՝ Յուցակ ձեռագրաց, որ ի Հանգէս Ամսօրեայ, Վիեննա, 1976, էջ 1-25):

9. Նկատի ունենք վերը վկայակոչուած «Ալիդըը» նոյն իսկ պ. Եղեանին յայտնի չէր ձեռագրերի թիւը խօսքը եւ այն փաստը, որ Ներսէս Ե. կաթողիկոսի կոնգրակների հատորների (Սան. № 153, այժմ՝ Մաշտոցեան Մատենադարան №№ 4585-4587) վրայ զբոսած հին համարները (153Ա, 153Բ, 153Գ) եւ մակագրութիւնները («Ե» ձեռագրաց Սանասարեան վարժարանի) արուած են Մ. Մազիստրոսի ձեռքով:

Այժմ՝ մի քանի խօսք հաւաքածուիս դոյացման աղբիւրների մասին :

Հեղինակի տպագիր կամ անտիպ գործերի մէջ այս հարցին վերաբերող որևէ տեղեկութիւն չենք գտել : Բայց նկարագրութիւնների մէջ առկայ որոշ ակնարկներ, անուղղակի փաստեր եւ որոշ ձեռագրերի պարունակած նիւթերը թոյլ են տալիս անել մի քանի հաւանական ենթադրութիւն : Ձեռագրերը զննան կամ նուիրատուութեան եղանակով հաւաքուել են Ռուսաստանի հայաշատ քաղաքներից, հետեւաբար, հատարածուիս մէջ «Խմնականում ներկայացուած են ԺԼ-ԺԹ դարերում Ռուսական կայսրութեան սահմաններում ապրած հայ մտաւորականների եւ հասարակական գործիչների սեպհականութիւն ելած կամ նրանց աշխատութիւնները բովանդակող ձեռագրերը : Այս առումով կայ մի ուշագրաւ փաստ . ձեռագրերից մի քանիսի մէջ քին փակցուած են եղել թղթեր, յետեւեալ բնութագրումներով . «Մալթոյ գլրւ-չեան 271» (N° 3)¹⁰, «Շարական գրչի 428» (N° 14), «Գրչեայ փիլիսոփայք ի Գրկպղե Տաթեւացոյ 590 (N° 27), «Ժողովածու քանք 153 (N° 44) : Կարծում ենք, որ սրանք հէնց այդ գործիչների անձնական գրադարաններում տպագիր գրքերի հետ նոյն շարքում գրուած ձեռագրերի համարներն են :

Ձեռագրերի մի մասում որպէս տէր կամ հեղինակ ներկայացուած են Յովսէփ Արղութեանը, Գէորգ Խուրեանցը, Աղէքսանդր Խուզարաչեանցը, Միքայէլ Միանսարեանցը, Աղէքսանդր Երեցեանը եւ ուրիշներ :

Այս հաւաքածուի մէջ էր Սահահեի նշանաւոր Քոթուկի մի ընդօրինակութիւն՝ գրուած Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան-Երկայնարագուկի պատուէրով (N° 93) : Այստեղ է եղել նաեւ Ներսէս Աշտարակեցու կոնդակների եռահատոր ստուար ժողովածուն (N° 87), որը մինչեւ 1872 թ. պատկանել է նրա երրորդդի Յարութիւն Շահապիկեանին եւ, հաւանաբար, նրանից էլ անցել է Մ . Սանասարեանին : Բարեբախտաբար, Մ . Տէր-Մովսիսեանը գիտակցելով նրա մեծ արժէքը հայ ժողովրդի պատմութեան նոր շրջանի եւ հայ-առնական յարաբերութիւնների պատմութեան համար, համոզել է Կ . Եղեանին՝ այս եւ հայ պատմիչների երկերի մի արժէքաւոր ժողովածու նուիրել էլմիածնի մատենադարանին : Այժմ դրանք պահպանուում են Մալտոյի անուան Մատենադարանում (N° 4584՝ Պատմագիրք Հայոց), (N°N° 4585-4587՝ Կոնդակք Ներսիսի) : Այստեղ էին նաեւ Մոսկուայի Լազարեան ձեմարանի աստուածաբանութեան, փիլիսոփայութեան եւ հայկաբանութեան ուսուցիչ Միքայէլ արքեպիսկոպոս Սալյանթեանի գործերի ձեռագրերը (N° 45, 48, 52, 63, 64, 67) :

Հաւաքածուիս մէջ մատուել են նաեւ Ղզարում, Մոզգոլում, Աստրախանում եւ Պետերբուրգում իր գործունէութիւնը ծաւալած նշանաւոր մանկավարժ րանաստեղծ եւ գիտնական, Սիմէօն կաթողիկոս Երեւանցու եղբորորդի, Գէորգ Խուրեանցի (Խուբով) հեղինակած գործերի մի մասի ինքնագիր ձեռագրերը (N°N° 108, 113-118) : Տեղին է տալի, որ այս գործերի մի մասի այլ ընդօրինակութիւն մեզ յայտնի չէ :

Աղէքսանդր Խուզարաչեանի անձնական գրադարանի եւ թղթերի մեծ մասն անցել է Կ . Եղեանին . նրա գիւնում մեծ թիւ են կազմում Խուզարաչեանի գործերն ու նրան վերաբերող փաստաթղթերը : Լիովին սպասելի էր, որ Եղեանը գնած լինի նաեւ նրա ձեռագրերը, նկատի ունենալով մասնաւորապէս, որ զոյն հաւաքածուի մէջ եղել է նաեւ Խուզարաչեանի ձեռագիր եւ տպագիր գրքերի ցանկը (N° 86) : Ձեռքի տակ ունենալով նոյնաբնոյթ մի տպագիր (ուրիշ 10 ձեռագրի ցանկ) եւ մի այլ՝ ձեռագիր (23 դրագրի թր-

10. Այստեղ (փակագծերում) եւ յետագայ բոլոր դէպքերում բերում ենք մեր նշանակած համարները :

ւարկումով) ցուցակ¹¹, պարզել ենք, որ մեր Հաւաքածուի 15, 36, 50, 56, 57, 58, 59, 62, 66, 71, 72, 81 եւ 86 Համարների ներքոյ զրանցուած ձեռագրեր են Ա. Խորաբարաւանի սեպականութիւնը:

Անցնել զարի երկրորդ կէտին Աղէքսանդր Երիցեանի եւ այլոց ջանքերով Սանահնի քարայրներից Հանուկէ ինն քարացած ձեռագրեր: Երիցեանն իր դուռն ձեռագրերից մէկը յանձնել էր Էջմիածնի Մատենադարանին (այժմ՝ Մաշտոցեան Սատենադարանի ձեռագիր N° 2375), մի երկրորդը՝ Ս. Սանասարեանին եւ երրորդը՝ Մոսկուայի ռուսեանցեան թանգարանին: Եղեանի մօտ եղածը (N° 93) վառուել է, իսկ Մոսկուայի Վ. Ի. Լենինի անուան դրպարանի (որ ստեղծուել է ռուսեանցեան թանգարանի Հիմքի վրայ) ունեցած 27 Հայերէն ձեռագրերի շարքում այդպիսի ձեռագիր այժմ չկայ:

Հիմք ունենք կարծելու, որ այս Հաւաքածուի Հինդ տաղարանից՝ 4ը (N°N° 51, 60, 61, 109) եղել են Միքայէլ Միանասրեանցիներ. N° 61 ձեռագրում այդ մասին ուղղակի նշում կայ, N° 60ի մասին իմանում ենք Միանասրեանի Հրատարակած «Քնար Հայկական» ժողովածուի¹², իսկ միւս երկուսից որոշ նիւթեր կարող են տպագրուած լինել «Քնար»ում:

Այսքանն է Հաւաքածուի զոյացման պատմութեան առումով մեր ասելիքը:

Վերջում մի քանի խօսքով անդրադառնանք ցուցակի Հրատարակութեան պատրաստելու նպատակով մեր կատարած աշխատանքին.

ա. Նկարագրութիւնների անուանատողերում Հաւաքածուի ձեռագրերի կոչումներ են. «Սանասարեան, Սանկտ Պետրբուրգ, առ Կ. Եղեան, N° ...»: Բայց քանի որ այդ ձեռագրերը երբեք Կարնոյ Սանասարեան վարժարանում չեն եղել եւ, ըստ կոթեմի, դեռիս եղել են կտակալատուր Կ. Եղեանի կողմից ըստ պատկանելոյն շկարպողուած Մ. Սանասարեանի սեպականութիւնը, ցուցակը վերնագրեցինք «Ցուցակ Հայերէն ձեռագրաց Մերկրտչի Սանասարեանի» ձեռով:

բ. Նոր անուանատողում զրանցուած Համարը եւ «Ընդհանուր ցուցակ»ում նկարագրութեան զրպեցրած տեղը ցոյց ենք տուել արտաքին ներկարգրական յատկանիշների բաժնի վերջում գետեղուած «Տեղեւորութեամբ»: Օրինակ. «Սան. N° 29, ՄՏՄ, ԸՅ, Խորհրդատուր-Պատարուամտոյցք, ԼՂ 15-16, ձևեա». այսինքն Սանասարեան այս Հաւաքածուի N° 2 (25) ձեռագրի նկարագրութիւնը վերցրել ենք «Ընդհանուր ցուցակ»ի Խորհրդատուր-Պատարուամտոյցք բաժնի 15-16 էջերից, իսկ ձևեա-ն խորհրդատուրների շարքում այս ձեռագրի Համարն է (135ա):

գ. Մեքենագրումից յետոյ կատարուած շտկումների եւ աւելի յաճախ նոր ձեռագրերի նկարագրութիւնների ընդհանուր շարք մուծելու պատճառով շատ էջեր եւ նկարագրութիւններ ունեն ա, բ եւ այլ նիթահամարներ (օր. 60ա, 60բ եւ այլն): Այդ պատճառով անհրաժեշտութիւն է առաջացել մեքենագիր էջահամարներին գուգահեռ, մատիտով, նշանակել նաեւ «զոյքաթերթի» համարներ, որոնց աճը հարթ է՝ առանց ենթահամարների: Մեր վկայումներում նշանակուած են միայն մեքենագրական էջահամարները:

դ. Նոր Համարների ներքեւում նշանակել ենք ձեռագրերի ընդհանուր խորագրերը, քանի որ Միական գրքերի նիթարաժիններում («Աւետարանք» եւ այլն) եւ մատենագիրների անունների ներքոյ այդ անունները, ընկալնուորար, զեղչուած են:

11. Բամի տպագիր եւ ձեռագիր զրոց հայոց ի մտնեմադարանի Ուրգոմական խորհրդակցանի տնտեսեմ Աղէքսանդրի հուղարաշնամ, Ս. Պետրբուրգ, 1830 եւ Դիւան Կ. Եղեանի, Հաւաքածու 58, ցուցակ 2, վաւերագիր 1626:

12. Քնար հայկական. խմբագրեց Մ. Մ. Մ., Պետրբուրգ, 1868, էջ ԺԲ:

ն. Զեռուգրի գրչութեան ժամանակը, տեղի, գրչի, ծաղկուղի, ստա-
ցոդի եւ այլ տիպի միւս անունները հանել ենք յիշատակարաններից եւ նշա-
նակել խորագրից անմիջապէս յետոյ:

գ. Հարցերը (թերթ, նիւթ, մեծութիւն, գրութիւն եւ այլն), «Բույտն-
դակութիւն» եւ «Յիշատակարան» ենթախորագրերը եւս մենք ենք նշանակել:

է. Զեռուգրական նիւթերի սկզբնաթերթերը նշելիս հեղինակը ք երես-
ները գրել է ընդունուած ձեւով (5ք, 11ք եւ այլն): Իսկ Կ երեսներն արտա-
յայտել է միայն թերթահամարը գրելով (օրինակ. 10. 60 եւ այլն) նշանա-
կում են 10ա, 60ա եւ այլն): Վերջին դէպքում վերականգնել ենք «տեղ չա-
հելու» նպատակով չգրուած ա-երը:

ը. Մերենագրական սխալները, որոնցով այնքան առատ է «Ընդհանուր
ցուցակ»ը ուղղել ենք եւ համառոտումները բացել, առանց նշելու:

ր. Զակերտների մէջ առնուած նիւթերի խորագրերի, սկզբնատուրերի
եւ վերջնատուրերի հետ խառը տրուած են ձեռագրադիտական եւ, երբեմն,
լատնադիտական քննյթի ծանօթութիւններ: Աղատուելով բոլոր չափերտներից,
խաբանչիւր նիւթի վերաբերող այդպիսի ծանօթութիւնները միաւորել ենք
եւ տեղադրել տուեալ ձեռագրական նիւթից անմիջապէս յետոյ: Իսկ Լ-ը
դրանք կազմուած են մէկ կամ մի քանի բառից եւ նրանց տեղաշարժումը
նպատակայարմար չէ. թողել ենք իրենց տեղում եւ առել կոր փակապը-
ծերի մէջ:

ծ. Ժողովածուների եւ հեղինակների գործերի շարքում, ամէն անգամ
նիւթերի վերնագրերը կրկնելու փոխարէն, հեղինակը համառօտել է դրանք
եւ զրանով իսկ հեռացել բնագրից, որից տուած էլ են նկարագրութիւնները:
Այդպիսի դէպքերում այլ ձեռագրերի օգնութեամբ վերականգնումները հա-
մարել ենք անիմաստ:

ժա. Երբեմն, մեր կարողացած չափով եւ համեմատաբար նիւթի օդ-
նութեամբ վերականգնել ենք յեղինակի վամ Երկի անունը, որ ձեռագրում
արտայայտուած չի եղել:

ծբ. Գրչութեան ժամանակի մեր վերականգնումները հիմնուած են հե-
ղինակի ցուցակի ժամանակագրական կարգի վրայ՝ նախորդ եւ յաջորդ ձե-
ռագրերի անուանատղերում նշանակուած մօտաւոր ժամանակը ճիշտ ենք
համարել նաեւ նրանց միջեւ գրուած նկարագրութեան համար: Բոլոր տե-
ղերում եւ բոլոր դէպքերում մեր միջամտութիւններն առել ենք ուղղակիին
փակագծերի մէջ:

ժգ. Թուականների կամ թուերի արաբական թուանշաններով արուած
վերծանումները, չնայած առնուած են կոր փակագծերի մէջ, բայց մերն են,
իսկ միւս բոլոր դէպքերում այդպիսի փակագծերի մէջ առնուած խօսքերը
հեղինակինն են:

ժդ. Մեր գիտողութիւններն ու ոլորտաբանումները աստիարանիչով նշա-
նակել ենք նկարագրութիւնների վերջում:

ժե. Նշանակել ենք նաեւ յիշատակարանների կէտադրութիւնը եւ՝ ցու-
ցակն օժտել անհրաժեշտ ցանկերով:

Վերջում պարտք ենք համարում մեր խորին շնորհակալութիւնը յայտ-
նել Օ. Ս. Եղանեանին, որի օգտաւէտ եւ շահեկան խորհուրդների եւ ցու-
ցումների շնորհիւ մեծապէս շահել է այս ձեռագրացուցակը:

Յ. Հ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ

ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ

1

ԱԻՆՏԱՐԱՆ

ՋՈՒՂԱ

ՌԾԲ - 1603

Գրիչ՝ ՏԷ Մկրտիչ։ Ստացող՝ Պարոն
Խաչիկ։

Թերթ՝ 156։ Նիւթ՝ մազաղաթ (բն-
տիք)։ Մեծութիւն՝ $13,5 \times 9,5$ ։ Գրու-
թիւն՝ Էրկսիւն։ Գիր՝ բոլորգիր (մանր)։
Տող՝ 21։ Կազմ՝ կաշեպատ տախտակ։
Մանրանկարչութիւն՝ գեղեցիկ ոսկեկար
ծաղկազարդեր, զարդեր, խորաններ եւ
տնօրինական նկարներ։ զրուած է մեծ
խնամքով, սիւնակները զարդարուած են
զոռնաւոր շրջանակներով, լատւ են նկար-
ները։

Տեղ. Սան. N° 25, ՄՏՄ, ԸՅ, Աւետա-
րանք, թղթ. Բ, էջ 1082, N° ՄՄԼԲ։

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

1. Աւետարան ըստ Մատթէոսի։
2. Աւետարան ըստ Մարկոսի։

ՅԻՇԱՏՈՒԿԱՐԱՆ

100թ. Գրեցաւ սուրբ Աւետարանս ի
ղեղաքաղաքս Ջուղայ, ի դուռն Սուրբ
Գեորգեան Եկեղեցոյն. թիւն ՌԾԲ (1603)
եւ յամսաննն Մայիսի ԻԴ (24). ի վայե-
լումն եւ յիշատակ պարոն Խաչիկին եւ
իւր ծնողացն՝ չօրն Պետրոսին, եւ որդոցն
Ստեփանի, Էւ ինձ՝ մեղաւոր տէր Մկրտիչ
զըշխաւ եւ իմ հաւր՝ Աղայթեղէ։

2

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

ՆՈՐ-ՋՈՒՂԱ

ՌԾԶ - 1707

Գրիչ՝ Նախաջ Խոջասար։ Ստացող՝
Միքիան որդի Ընդրոնիկի։

Թերթ՝ 42։ Նիւթ՝ թուղթ (հաստ)։
Մեծութիւն՝ 25×19 ։ Գրութիւն՝ Էրկ-
սիւն։ Գիր՝ բոլորգիր. Տող՝ 19։ Կազմ՝

թուղթ (մաշուած, անմարուր)։ Մանրա-
նկարչութիւն՝ կազմի Ա կողմն Սուրբ Եր-
ուրդու թիւնը Էրկսիւն, մեծ փառքով,
Աստուծոյ անունը միշտ ոսկով. ոսկեայ
թռչնազարդ. ոսկեկար յուսանցազարդեր,

ունի բազմաթիւ նկարներ՝ ոսկով եւ հա-
րուստ դոյներով նկարած, նոյնպէս ճոխ
են սիւնակներէ զարդարուն շրջանակները:

Մանրանկարք.

ա. 1բ. Եպիսկոպոսը կարգում է ըղ-
ղեստաւորուած սարկաւադի բռնած դիր-
քը՝ շողած դիրքով. «Ամենակայ»:

բ. 9բ. Քահանան վերաբերում է Աւե-
տարանը:

գ. 15բ. Սարկաւադը շողած, կրծքին
Աւետարան, ձեռքին թանաքածան, ար-
տաստում է ֆառատաճա:

19ա. Քահանան ընդունում է սկիւճ՝
սարկաւադից:

ե. 21ա. Քահանան բուրվառում է սը-
կիւճը:

զ. 25ա. Երկու տեսարան. Յիսուսը ա-
շակերտներին հաց է բաշխում: Յիսուսը
աշակերտներին դիմել է բաշխում:

է. 28ա. Երկնքից ցոլում է հուր եւ ե-
րեսում է մի աջ:

ը. 34ա. Քահանան արտասանում է
«Նի սուրբ, ի սուրբ»:

Տեղ. Սան. N° 29, ՄՏՄ, ԸՅ, Խոր-
հրդատեսութեամբ Պատարագամատոյց, էջ 15,
16, N° ձԼԵա:

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Խորհրդատեսութեամբ.

Սկզբում տարբեր զըջից զրած է եւ
տնից մի շարական. «Թաղականին ծնունդ
անեղ / յորդիւղ տիրականդ անստակի...»:
Նախադիծն է «Ի Ղաղ[արէ]»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ա. 41բ. [Գրչի] Փառք... Արդ՝ զըե-
ցաւ ի սուրբ Խորհրդատեսութեամբ ի յերկրս
Շոշ, որ է Ըսպահան, ի դուռն Ամնա-
փրկչին, ի հայրապետութեան տեսն
Նահապետին եւ յառաջնորդութեան Ա-
ղէփանդի, ի թագաւորութեան Ծախ
Սօլքանին, ի ձեռամբն անարժան եւ յող-
նամեղ Նաղաշ Խոջատարին:

Մանաւանդ Ընդունիկի որդի Միրիանն
եւ իւր կողակիցն՝ Դարաջանին, իւր որդի
Բամազին եւ կողակցոյն՝ Ասքանդարին,
եւ որդոյն՝ Գիւլին, որ ստացաւ սուրբ
զիրքս, եւ Լորոյն՝ Միրիանն - Պապէին,
եւ Զօրապին, եւ Գաբրիէլին, եւ Բէցանին,
եւ Գօղեմին, եւ ֆլէրցն՝ Թամարին եւ
Մարիսին, եւ Դարաջին, եւ հարսներին՝
Գոգչակին, Հանա-Խանումին... Գրեցաւ
թվին ԹՃԾԶ (1707)-ումն, Հոգտեմբերի
տասն:

բ. 42ա [Յետադայ] Ես՝ տէր Մէսրոփ,
որ Յուլիս 2(6) յօրհնեցայ, թվին] ԹԻԲ
(1753)...

Շարունակութիւնը զրած վրացերէն:
Ձեռագրիս մէջ յիշուած անունները մեծաւ
մասամբ վրացական են. հաւանաբար,
Պարսկաստանի հայադաւանութիւն ըն-
դունած վրացական մի ընտանիքի զրեւ
տուած ձեռագիր է *:

* Եւրոպացի հեղինակը հիշու ըն- տմե-
նայն հասանակատութեամբ, արտեղ Կաթինից Եսո-
Արասի զաղթեցրաց հայեր էին եւ վրացական ա-
նունները գալիս էին նրանց նախկին միջավայ-
րից:

3

ՄԱՇՏՈՑ

ժէ - XVII

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Կանոնք Մկրտութեան, Պսակի, Հա-
ղորդի... Նորապետ գրքի օրհնելոյ:

Գրուած է բաւական անդրադէտ եւ զը-
խալաւատ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Կազմի մէջըին) Մաշթոց զրչեայ 271:

ՏՕՆԱՑՈՅՑ

ԵՐՈՒՍԱԳԼԵՄ

[Պ^o] ԾԸ — 1409

Գրիչ՝ Ալէքսիանոս արեղայ:

Թեբք՝ 124: Նիւք՝ Թուղթ (Հաստ):
Մեծութիւն՝ 13×8: Գրութիւն՝ միասիւն
(8,5×5,5): Գիր՝ բոլորգիր: Տող՝ 16:
Պահպանակ՝ 2 թերթ մազաղաթ: Կազմ՝
կաշեպատ տախտակ:

Վիճակ՝ հնամաշ, անմաքուր, ցեցա-
կէր:

Տեղ. Սան. N^o 44. ՄՏՄ, ԸՅ, Տօնա-
ցոյցք, 42 3—4, N^o ԺԸ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1ա. Տաւնացոյց եւ Աւետարանացոյց
եւ կարգաւորութիւն եւ հրահանգ տէրու-
նական տանինց, զոր կարգեալ է եւ սահ-
մանեալ է սրբոյն Սահակայ Հայոց հայ-
րապետին, զոր ընկալեալ հասուցին առ
մեզ ըստիւնիք մեր — Աստուածայայտնու-
թեան առաջին աւուրն զիշէրն [փ]առին
կանոնադրիւն: Էի ԲՁ հաւատամք: Եւ
զղևստն փիլիսոփայքն... (Սխալներով է
դրած):

2. ա. 100ա. Ժամամտերն հասարա-
կաց — Որ ի հարկ առաքեցար Փրկիչ ևւ
մարմնացար:

Բ. 113բ. Մեսեղիփ Խնդեան, Յարու-
քեան (ևւ այլն):

գ. 115բ. Սյրասացութիւնք:

դ. 124բ. Այս է ձայն Ը: ԱՁ. Երա-
նե[ա]լ. կանուն է — Աւրհնեց:

Անթերի, լաւ օրինակ է, միայն թուա-
կանը դիտարկեալ բերած է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ա. 124բ. [Գրչի] փառք... Գրեցաւ
Տաւնացոյցս ի սուրբ Երուսաղէմ, ի սուրբ
Երուսաղ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ի
թիականիս մերոյ [Պ^o] ԾԸ (1409) (առաջի
տառը բերած է) ձեռամբ անմիւս Ալէ-
սիանոս անուամբ արեղայի... Ով ևզ-
րարք, ժամանակս էր վերջի ու տեղս էր
խիստ դժար. մահապառ, որ ինձ ընկեր
էր, խիստ կայ-կաչ անէր, անմեղադիր
լերուք սխալութեան. կար մեր այս էր:

Բ. 19ա. [Յետագայ] (Տղեղ շղագիր)
ինձ՝ մեղաւոր տէր Պետրոս յիշեցէք,
թվ[իւն] Ռձնի (1698) —ին զրեցաւ, Մար-
տի ԺԹ (19) զրեց...:

գ. 99բ. [Յետագայ] (Նօսր) Թուին
ՌձԺ (1661) Զաքարիէ զղաւակ ելաւ:
Թուին ՌձԼԶ (1687) Կարապետն, Մկր-
տումն զաւտկ Լղան: Թուին Ռձն (1691) —
ին Աւետիկն զաւտկ ելաւ:

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԼՈՎ

ՌԻԳ — 1574

Գրիչ՝ Միհաս Տիւրերկրացի: Ստա-
ցող՝ Տէր Խաչատուր:

Թեբք՝ 91: Նիւք՝ մազաղաթ: Մե-
ծութիւն՝ 10×7: Գրութիւն՝ միասիւն
(7,5×5): Գիր՝ բոլորգիր: Տող՝ 14—18:
Կազմ՝ լաթ:

Վիճակ՝ անմաքուր, նորոգուած:

Տեղ. Սան. N^o 52. ՄՏՄ, ԸՅ, Ժողո-
վածոյք, էջ 86, N^o 2Դ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

61. Պատմութիւն սրբոյ կուսին Մարիա-
նէի — Եւ ևղեւ յետ յարութեան Տեառն
մերոյ, Դէմէտիանոս ծառայ Քրիստոս-
ի]. Տրմարիտ հաւատով ևւ նուսով
Քրիստոս[ի] յուսարեցայ ևւ ծանեայ
նորա զօրութեան առ սուրբ վկայս իւր,
ևւ ցանկացայ զրկ զվկայութիւն սրբոյ
կուսին Մարիանէի... Եւ էր Մարիանէր

դուստր մեծատան և հայր նորա քահանայակետ էր կոչուս... Կատարեցաւ սուրբն Մարիանէ յամենայն Սահմի ժե, ի քաղաքն յԱնտիոք, ի Թաղաւորութիւն Դիոնիւտիանոսի:

2. Արեգի ժժ Եւ Մարտի տէ: Վկայաբանութիւն սրբոյն Կատարիներն — Այս իմաստասէր յանճարէղ էրինս Կատարիներէ էր ի քաղաքէն Աղէքսանդրու, զուստր Կոստանդին արքային, հօր մեծին ինքնակալին Կոստանդիանոսի... Ուսաւ դամենայն հելլենական և զհոնետորական հանճարս իմաստասիրական. զՀոմերոսին և զՎերդիլիոսին, զԱսկղիպիտայն և զԱրիստոտէլին, զՊլատոնին և զՊորփիրոսին, զԱրիստոտէլայն և զՊիտագորին. զՅաւնէսին և զՅամբլիսին, զՀիպոկրատայն և զԳալիանոսին, զՍիդիրայն և զԴիանէսիսին, զպարսիցն և զմոգոցն և զամենայն աստղաբաշխական զիրութեան, զերկրաչափականն և ըմբլականն, զերաժշտականն արուեստ և զթմականն... Եւ Ես՝ Աթանաս տպիր, ծառայն սրբոյն Կատարինէ, որոյ սկանառէս եղէ նահատակութեան և ականջալուր և ստոյղ զրեցի զպատմութիւնս:

3. Աղօթք Գրիգորի Նարեկացոյն — Ընկալ քաղցրութեան... [Բան ժի, զ]:

4. Նորին — Որդի Աստուծոյ Կենդանոյ... [Բան իւ]:

5. Նորին — Արդ այսքաննացաւ անբաւից... [Բան ժի, զ]:

6. Նորին — Երեքանձինս տէրութեան միոջ ընտելեան...

7. Աղօթք վասն բժշկութեան ի զլխացաւութեան — Գլուխ և Փրկիչ արարածոյ՝ Յիսուս Քրիստոս, բժիշկ ցուց:

8. Աղօթք սուրբ հօրն Յովնանէս Գառնեցոյ վասն զիշերային զարիւրանաց — Աղաչեմք զքեզ, Տէր, և զոհանամք...

9. (Աղօթքներ Նատուածներ ի մի ժողովածուն):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ա. [Գրչի] Փառք... Արդ՝ զրեցաւ սակաւ զիրս ի յայնպիսիում իյան իսաց, ի քաղաք Լով Կոչեցեալ, ի Թմականիս հայոց Ռիգ (1574), Հոկտեմբեր ամսոյ, ի ձեռամբ Թերափաթ զրչի ձձ-ժժ-ՄՄ-ւ-Ռ-ժժ [Միմասի] Տիւրերկրացոյ, մեղադիր չի ինիք զիրս, զի Կ (60) ամեայ էի և ձեռաս տողայր...

բ. (Գեղեցիկ նստգրով իւրաքանչիւր հատուածքի վերջում) Բժշկութիւն ծառայիս Աստուծոյ՝ տէր Խաչատուրին, իւր կողակից՝ Գայրանին, իւրանց որդի՝ Պետրոսին, Պօղոսին, Մարտիրոսին:

6

ԱՂՕԹԱԳԻՐԳ

ՌԿԳ — 1614

Գրիչ՝ Ղուկաս: Ստացող՝ Տէր Բարսեղ: Թիւրք՝ 16: Նիւթ՝ Թուղթ Մեծութիւն՝ 16×10: Գրութիւն՝ միասին (11.5×7.5): Դիր՝ նստգրիչ: Տող՝ 17-21: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Մանրամրկարչութիւն — խորան՝ 2ա, 96ա:

Վիճակ՝ անմաքուր, խոնաւացած, վերջից թերի:

Տեղ. Սան. N° 54. ՄՏՄ, ԸՑ, Ազօթագիրք, էջ 7, N° Իե:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1ա. Երբ սուրբ Աստուածածնի — Աստուածածին կոյս Մարիամ. սրբուհի, սրբուհի / Մայր և ձեռք Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Յետոյ զրաժ երգ է: Բուն ձեռագիրը սկսուում է յաջորդ նիւթից:

2. 2ա. Եփեմի ասացեալ — Տես, Տէր, զոտուպանս իմ:

32բ. Հրամարիմբ ի ստուանայլ :

32բ. Սոստովանիմբ և Զատուամբ :

34ա. Մեղայ ամենասուրբ երբորդու-
թեան :

3. 39ա. Վստն հաղորդուրեան — Պարտ
է արժանադէս մերձենայ ի Աստուծոյ, զի
մի զազարեացուք :

4. 40ա. (Գրուած են ամիսներ, օրե-
րի թուով) — Թուովար՝ ԼԱ, Փետրովար՝
Ի և Ը (և այլն) :

5. 40ա. Աղաւթք և խնդրուածք սուրբ
Անաստաս քահանայի — Տէր, մի արտմը-
տութեամբ քով :

6. 45բ. Աղաւթք Մեքորայ վարդա-
պետի ասացեալ Կ ժամու աւուրն ընդդէմ
դիւանցն : Զարաւոր մաղաւմք — Հոգի
Քրիստոսի Տեսնի մերոյ :

7. 46ա. Նորին. Աղաւթք Զ ժամու —
Թապաւոր հղար ապաւն :

8. 47ա. Նորին. Ի Թ ժամու — Աստուած
բարերար և բազմապատկաւ :

9. 50բ. Աղաւթք յորժամ որդալայ ան-
կանի ոք, ասացեալ սրբոյն Գրիգորի Հա-
յոց Լուսաւորչի — Աւրհնակ է անբաւ
մարդասիրութիւն քո :

10. 52բ. [Նորին] . Աղաւթք առաջի
սուրբ խաչին Քրիստոսի — Տէր Յիսուս
Քրիստոս նշանի խաչի քո երկրպագանեմ :

11. 56ա. Մազքանք ճորին՝ գիշերի
ժամուն — Աստուած յաւիտենական բարե-
բար և ամենակալ :

12. 51բ. Նորին Յակոբայ ի խորաց
սրտէ արեւիս մաղաւմաց առ միածին
Բանն — Տէր Աստուած Յիսուս Քրիստոս :

13. 60բ. Աղաւթք աղաչանաց ամենա-
սուրբ Աստուածածինն, Մե(սո)բայ վար-
դապետին ասացեալ — Ամենասուրբ Կոյս
Մարիամ Աստուածածին, մայր լուսոյ :

14. 61բ. (Գիտելիքներ մի քանի սո-
նելի մասին) :

15. 62բ. [Ներսիսի Շնորհալոյ] Ներ-
բող խաչի — Բարձրացուցէք զՏէր Աս-
տուած մեր : Տունք ՄԺԲ :

16. 80բ. Յովհաննու վարդապետի
Գառնեցոյ. Աստուար պիտու է մեզ ողբ
հառաչանաց եւ արտասուք :

17. 85ա. Աղաւթք — Ամենակալ Աս-
տուած, բարերար, մարդասէր :

18. 93ա. [Երգ պաշտաման գիշերոյ]
— Աստուածածին մայր Քրիստոսի / Իմ
յոյսն դու յաւուր մեծի : (Ալբուքենով) :

19. 94բ. [Ի վերայ չար աշից եւ չար
նիւթի] — Յորժամ Երթայր Յիսուս ի
ի զաւտն Երիբովի, հարցին ցնա եւ ասեն.
Տէր, այն հրեշտակաց անուանք ի՞նչ են,
որ ի վերայ չար աշից եւ չար նիւթի,
չար լեզուի... Պատասխանի ետ Տէրն.
Արիոս, Սարգիս, սուրբ Ասիանոս, Ու-
րիէլ, Սարիէլ, Սարսափիէլ, Միքայէլ,
Գաբրիէլ. և Փայլատակմունք, Բարեբա-
նողք... ուր այս անուանք յիշի, չար աշք
կուրանայ :

20. [Անուանք Սլոբոդ Նշանաց] — Բա-
րեխոսութեամբ սուրբ Աստուածածինն,
յԱրեամբ ներկեալ Սուրբ Նշանին, Վարա-
պայ Սուրբ Նշանին, Ախթամարայ Սուրբ
Նշանին, Հոռմէլոյ Սուրբ Նշանին, Վա-
րդան Սուրբ Նշանին Կողբայ Սուրբ Նշա-
նին, Արգիշտոյ Սուրբ Նշանին, Սիրուդայ
Սուրբ Նշանին, Հաղբատայ Սուրբ Նշա-
նին, Հոռմայրի Սուրբ Նշանին, Արապա-
ծայ Սուրբ Նշանին, Աստուածըկայ Սուրբ
Նշանին, Աւաշալած Սուրբ Նշանին,
Գուռլ Սուրբ Նշանին, Տէրուական Սուրբ
Նշանին, Գետարդէլոյ Սուրբ Նշանին,
Կենսալոսու Սուրբ Նշանին, Մարդապաւ-
նեաց Սուրբ Նշանին, Տաթեւոյ Սուրբ
Նշանին, Աւալ Սուրբ Նշանին, Պատե-
րազմի Սուրբ Նշանին, Ուռնկարու Սուրբ
Նշանին, Կարմիրակն Սուրբ Նշանին, Կեն-
դանարար Սուրբ Նշանին, Կապուտիակն
Սուրբ Նշանին, Կախմախուտ Սուրբ Նշա-
նին, Մուսայ Սուրբ Նշանին, Գանձասա-
րայ Սուրբ Նշանին, Ապարանուց Սուրբ
Նշանին, Հաթերքոյ Սուրբ Նշանին, Հա-
ցունեաց Սուրբ Նշանին, Թեւատ Սուրբ
Նշանին, Թրի Սուրբ Նշանին, և Քրիս-
տոսի Սուրբ Գեղարդեան և Սուրբ Վար-
շամակին և Սուրբ բնեւոյցն ուրիցն և
ձեռացն և այլ ամենայն նշանացն ան-
բարբառ բարեխաւսութեամբ փրկեայ և
ազատեայ տէր Բարսեղոս, Տէր Աստ-

21. 96բ. Նիքիմի վանն ապաշխարու-
քեան, զոր պարտ է ամենայն բրիտանէի

ուսանելի եւ գարավի գլուխ տանել եւ յա-
նոյանալ Աստուծոյ :

22. 102ա. Նորին եփեմմի դարձեալ
Յաղագս ասյաշխարութեան եւ գղջման եւ
ալտաստաց (վերին թերի) :

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

32ա. Թիշեցէք զՂուկաս մեղապարտ
գրչիս... Թվական 1614) էյ գրեցի
եփեմմի խորիս :

7

ԱՂՕԹԱԳԻՐԻՔ

ԺԸ – XVIII

Թերք՝ 31. Նիւթ՝ թուղթ : Մեծու-
րիւն՝ 14,2×8,5: Գրութիւն՝ միասին :
Գիր՝ նոտրդիր : Տող՝ 15: Վերնագրեր՝
կարճիւր : Կնիք՝ մի քանի, անբնթեւանի :
Վիճակ՝ կաղձահան, թերի երկու ծայ-
րից, անմաքուր, լուսանցները կտրտուած :
Տեղ : Սան. N° 55. ՄՏՄ, ԸՅ, Աղո-
թադիրք, 42 25, N° ճԾԲ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1ա. «Յովհաննու Դառնեցոյ Ա-
ղօթք ասացեալ ի վերայ գրոյ անուան
իւրոյ» – ծայրակապ՝ Ովանէ :

ա. 1ա. Աղօթք երկուշաբթի աւուր –
Ով ամենակալ եւ ամենաողորմած Տէր :

բ. 1բ. Երեքշաբթի աւուր – Վերին
վայելչութեանցն վերանորոգող :

գ. 2բ. Չորեքշաբթի – Անկանխձ առա-
ջի քո եւ աղաչեմ :

դ. 3բ. Հինգշաբթի – Ներող եւ ներ-
դարձող բարեաց :

ե. 4բ. Ուրբաք աւուր – Էապէս բարի
եւ ամենակարող :

զ. 5ա. Եարբաք աւուր – Սուրբ երրոր-
դութիւն անբաժանելի :

2. 6բ. Աղօթք առ սուրբ Աստուածա-
ծին – Ով ամենաբարձիւր Աստուածածին :

3. Գրիգորի Նարեկացոյ – Եւ արդ ի
վերայ այսքանեաց յուսահատութեանց,

Աստուած իմ Յիսուս եւ յոյս : [Բան 2] :

4. 23ա. Եվրեմի – Որ անեղզ էս եւ
անստեղծ :

5. 30ա. Անաստաս քահնայի – Տէր,
մի սրտմտութեամբ քով :

6. 48ա. Մեսրոպ վարդապետի ին-
նետրորդ ժամու – Տէր բարեբար եւ բազ-
մագութ :

7. Գրիգորի Նարեկացոյ – Եւ արդ՝
զի՞նչ դորձեացես [Բան Ը] : Տէր Աստ-
ուած, բարերար, բազմապարզ եւ [Բան
2Բ] : Եւ արդ՝ անկեալ յերեսս Հոգանիթ
[Բան 4Ը] :

8. 70ա. Ջաշս ի մահու ժամն ասա-
ցես – Տէր Աստուած Յիսուս Քրիստոս,
չնորհեա ինձ զսա կերակուր :

9. 71ա. Նորին Գրիգորի – Աստուած
յաւիտենական բարերար : [Բան 4Դ] :

10. 72ա. Մեսրոպ վարդապետի Ա-
ղօթք ժամուց աւուրն ընդդէմ դիւաց –
Հոգի Սուրբ Աստուծոյ :

11. 73բ. Բանք աստուածայինք պլ-
տանի ամենայն կրօնաւորաց Անանիայ
հայոց վարդապետի ասացեալ – Երեւե-
լոյ, Տէր, զշնորհս քո ի ծառայս քո :

12. Աղօթք երեկոյն ժամու Մեսրոպ
վարդապետի ասացեալ... – Յորժամ ե-
րեւիս յերկնից նորոգել եւ լուսաւորել
դամենեւեան... (թերի) :

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

[ՆՈՐ-ՋՈՒՂԱ]

ԺԷ - XVII

Գրիչ՝ Մարտիրոս էրէց Ջուղայեցի:
Թեքր՝ 467: Նիւր՝ Թուղթ: Մեծու-
քիւն՝ 15×9: Գրութիւն՝ Ճիսիւն (12×
7): Գիր՝ հօտրգիր: Տող՝ 21: Վերնա-
գրեր՝ ճի մասը կարմրով: Կազմ՝ կաշե-
պատ տախտակ: Ա կողին զրոշմուած
Քրիստոս խաչեալ, թ կողին՝ Աստուածա-
ծին:

Վինակ՝ պահուած է իւրտ վատ, թե-
րի սկզբից, խոնաւացած, անմարտուր թա-
նաքակեր՝ 187-189, կրկին կազմողը մա-
ստմք նորոգել է:

Տեղ. Սան. N° 56-78. ՄՏՄ, ԸԶ, Մա-
տենագիրներ, թղթ՝ 2, էջ 581, N° 1215:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Նարեկ:

299ա. Յիշատակարան մոյն հսկողի
արարեալ:

2. 300ա. Վարք սրբոյ առն Աստուծոյ
Գրիգորի Նարեկացոյ:

ՂԵ դուռ. չուրի Ա-Բ, Գ-ի մի մասը,
վերջից թերի:

3. 302ա. Լուծմունք հոգեւից բանից
սրբոյն Գրիգորի - Ձայն հառաչանաց:
Ձայն երկուս բաժանի՝ յօղեայն եւ յան-
յօղն:

4. 461ա. Ցանկ զլսոց Նարեկ գրքիս:

Գրույն է վերջին կազմող եւ նորոգող
Ջուղայեցի ժամարար տէր Կարապետ Ա-
ւետ Եակոբեան:

5. Շնորհա մեղ, Տէր, ի գիշերի:

Շղագրով գրուած է իբրեւ պահպանակ
[գրուած թերթի վրայ]:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ա. 459ա.

[Գրչի] ի քաջ հովիւդ աղաչեմ,
Բստ պոռնկին զիս արտասուեմ,
Առ ոտդ անկեալ, եւ պաղատիմ,
Զի բաղուծ են մեղանքս իմ...

Ոտանաւոր, որի նախադիւծ տառերն
են. «Ի տէր Մարտիրոսէ» (վերջից թերի):

բ. 460ա. [Գրչի] (Ազգրից թերի. հա-
կան մասը կորած)... Ստեփաննոսի եկե-
ղեցւոյ. զոր Տէր Աստուծո՞ւ անշարժ պա-
հեցէ եւ ընդհանուր սրբոյ Եկեղեցօք,
աղաչեմ դձեղ, ոյ սուրբ հարց եւ եղ-
բարք... յիշեցէք... զՄարտիրոս էրէցս
Ջուղայեցի, եւ զծնողս իմ՝ Խորիքանն եւ
գիւնգուհին, որ յայն ամի հանդեաւ...
գորչին իմ՝ Ելմամատախին... եւ ցճոխի-
սիմէն եւ զՅոնանէսն...

գ. 468բ. [Նորոգողի] Յիշեալիք ի
Քրիստոս գհատաւորաց զրչողիս՝ Ջուղա-
յեցի ժամարար տէր Կարապետ Աւետ Թա-
կոբեան: Նոր-Ջուղայ, Ղարաղէյն, թիւն
1832, Թիւրայ 30-ումն:

դ. [Յետապոյ] (Շղագրով) Զաճարայ
տէր Գրիգոր... ի Ջուղայ, 1844:

9

ԱԽԵՏԱՐԱՆ

ԿԱՆ

ՌԵԷ - 1608

Գրիչ՝ Սիմէօն էրէց:

Թեքր՝ 325: Նիւր՝ Թուղթ (հասա-
րակ): Մեծութիւն՝ 21×15: Գրութիւն՝
երկսիւն: Գիր՝ բարբոցի (պարզ եւ կո-

պիտ): Տող՝ 18: Մամբանկարչութիւն՝
հասարակ զարդ, զարդադրեր, եւ խորան,
եւ նկար՝ աւետարանիչներ կազմ՝ կաշե-
պատ տախտակ զրոշմուած:

վիճակ՝ խիստ հնամաշ, անմաքուր, ծրարուած, խնամացած:

Տեղ. Ստ. N° 58. ՄՏՄ, ՀՅ, Աւետարանք, Թղթ. Բ, էջ 1108-1109, N° ՄՄԿԲ:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

1. Աւետարան:

Դրած է անդրադէտ ձեռքով և սխալաշատ է. «Աւետարան Մաթէոսի ամէ: Դիրք ծրղեայն Յիսուսի Քրիստոսի որդի զմայր Նորա... խորհեցաւ լռելեայն... հրեշտակք Տէառն ի տեալեան Երեւեցաւ» և այսպէս:

2. 99ա. Մայր ցանկալի, հիանալի, յոյժ տենչալի:

Ուտանաւոր, զրած միայն չորս տող, ցտակութիւն զովարանելու Մարիամ Աւետարանին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ա. 323ա. [Գրչի] Փառք համաշխոյ միասնական Սուրբ Երրորդութեան՝ Հայր և Որդոյ և Հոգոյն Սուրբ այժմ և և չաբունակ: Արդ՝ զրեցաւ սուրբ Աւետարան ի յերկիրս որ կոչի յԱ[ր]դ[ր]ումս, ի դիւզս ի Կան, ի զուռն Սուրբ Վառ[վառ]ա կուսին և սրբալ աւ[անայն] սրբոցիւն. ամէն: Ի Թվականիս հայոց ՌԻՆ (1608) ի տեղւոյս յառաջնորդն Սահակ Եպիսկոպոսին, և վարդապետն մեր Մինասն, և զանաբաժն Սիմէվոն Լրեցս որ անունոյս կրաւ[անաւոր] եմք և զործոյս ոչ: Գրեցի զուրբ Աւետարանս մերս ստեղծեց հոգ, որ զանունս ունիմ և րդ-զործս՝ ոչ, և զվարպետն մեր Թոր[ոյ]ս զպիրն, Աստուած զիր զատուտան քաղցր տուն. ամէն: Դարձեալ յիւնեցէ զհոգոր-յարն իմ՝ Մարգար Էրեցն, և քահանայութիւն նայ յուսուց զիս, և կին իւր՝ Բովալարն, և զիր որդիքն հաւասար ամէն, որ առ Աստուած են փոխել, և մին հոգորարն իմ՝ Վարդան, և կին իւր՝ Մովսիսանն, և իւր որդոցն, որ առ Աստուած են փոխել: Եւ զարձեալ յիւնեցէ զզոյզ զրիւն, և զհայրն իմ՝ Յովաննէս, և մայրն իմ՝ զԴեմոփորն, և աղբարն իմ՝ Բուդաղան, և Եփեսոսորն, և Տիւրատորն, և Եղիկն, և Ածատորն, և

քորն իմ՝ Գուհարն, և Կողակիցն իմ՝ Եղնիկն, որ են առ Աստուած փոխել...

Երեւեցէ զԿալիւն և զԿողակիցն իւր՝ Կարապետան, որ առ Աստուած փոխել է, և միւս Կողակիցն՝ Հապրէլարդն, զի անշարիկ աշխատանք վրեցին հետ մեղ: Խիշտ զառն և զիժար ժամանակի հանգիսեացն՝ Թաղաւորք խառնակեցան, և ևկաւ սաստիկ պատուհաս, և սոյք, և սրածութիւնքն, և մահ տարաշամու-թիւն ի վերայ երկրի: Եւ հայրն որդին ուրացաւ, և այր զկինն թարկեց, և կինն զայրն ատեց, և սիրելին զիւր քարկտան ատեց, և աշխարհին զսէրն ու զուրթն կտրեցաւ: Եւ մէկ մոթն հացն ՈՅ (46) զոռոշ էլաւ, և յուժով զանոթն սպանեց ու թալեց, և աղքատն զաղքատս մոր-դեց ու կերաւ. և հէցեղ պատուհասեալ էր, և տոր զմայրն զիր տղայն խելթեց ու կերաւ: ՈՒ վայ մեղ, մենք այտ ժա-հահոտութիւնդ և չարաշար տառապանքդ եւ ամէնն տեսնք, որ հանց պատուհաս էր, որ զինչ անանին նման կու հէծային և կու տառապչին, և հաւաքի պէս կու ծկակէին, և մարգմ չէր ողորմիլ, որ նոցա ջուր տայր, կամ մէկ թղպլ մի տաղ ապուր, այն որ չունիր ճճկուսէր, այն որ ունիւր ամանոյն՝ ոչ ջուր տայր և ոչ քարազանովն՝ ապուր, թո զու մուտտու ևս կերել: Վա մեղ հապար բերան, որ այտ ամենայն րանտ տանք ու այլ ի հետ աշխարհի ման զու զանք:

Արդ, զարձեալ աղանձ զձեզ՝ զփոյզ զրիւս յիւնեցէ, և խիստ ծանդր աչր էի. և զեւ ևս տղայ էի, սպայ կասէին, թէ ժԲ (12) ապ (իմա օրօրոց) կայր տունն, և Գ (3) Եպիսկոպոս, և Դ (4) Էրեց, և Գ (3) սարկաւաւ, և Գ (3) զարբին, և Է (7) զերձակ, և Ե (5) ճուլակ, և Բ (2) կուկար, և Դ (4) հալած, և Դ (4) զուրկայր, և այլ ամենայն րանն, և խարանն ու սպէնքն պաշտայ խոն[գրա]րին զուրն զհնացել: Եւ զարձեալ աղա-նձ ևս զձեզ՝ փոյզ զրիւս հէց մէն մնացի, և երկիրն Բաւնոն աւերեցաւ, և էի զեզն իմ Կրնոնդի, քար քարի վերայ չմնաց, և Բ (2) ջաղացաւ և Ա (1) միթի-հանքս աւեր մնացին, և ևս զարկուց եկաւ այս քրիստոնե մարդոյս տունն՝ աստուածապաշտ Լաչիմիլ, և որդին իւր Մեացական և Եսեակ սարկաւապն, և միւս որդին՝ Եղիկն, որ առ Աստուած փոխել:

ամէլ [ն⁷ . Եւ սորայ զիս բնդունեցին ևւ Աստուած զորայ ընդունէ: Յիւնցէք, Աստուած ձեզ յիւն: ամէն:

բ. 325ա. (Փսալմ. ինչ տարբեր զրով, կամ հայն զրիւն աւելի յետոյ զրել է շատանկութիւնը). Եւ զարձեայ յիւնցէք Գովիտանն, զի անշարի աշխատանք կրեց հետ մեզ, Աստուած զիւր զատաստան քաղցր տոնէ, հարն իւր՝ Սարգիսն ևւ

մարն իւր՝ Վարդիքուփ, ևւ դաւակն իւր՝ Մանուկն. Ներսէսն, Սարգիսն, ևւ միւս որդիւն՝ Սելգոնն: Եւ զարձեայ յիւնցէք զԴասույարն. ևւ զեղրայրն՝ Ղազարոսն, ևւ միւս եղրայրն՝ Ղուկասն, հայրն իւր... Արեւն. ևւ մայրն իւր՝ Քարամն, ևւ քուրն իւր՝ Մեհրիկն: Եւ յիւնցէք եղիւզարն. Աստուած ձեզ յիւնցէ. ամէն: Թորայմի-շին, Տիրարի Ամիր-Սարգսին:

10

ՃԱՄԱԳԻՐԻ ԱՏԵՆԻ

ՏԱԹԵԼ

ՌՃԾԼ - 1708

Դրիչ՝ Եփրեմ: Ստացող՝ Յոհան կրօնաւոր Զուգայեցի:

Թեքք* 278: Նիւթ* մաղաղաթ (հասարակ): Մեծութիւն՝ 26,3×21: Գրութիւն՝ երկսիւն (18,5×6,6): Գի՛ր՝ բաւորակիր (խոշոր): Տող՝ 23: Մանրամկարչութիւն՝ զարդերը սակաւ, զարդագրեր, վերնադրեր կարմիր, խորան - 3ա, 122ա, կիսախորան - 30ա, 33բ, 58բ, 64բ, 68ա, 72ա, 86ա, 111բ, 134բ, 149բ, 165բ, 179բ, 196բ, 211բ, 228ա, 245ա, 258բ: Կազմ՝ կաշեպատ տախտակ:

Վիճակ՝ կազմի Ա կողմ ու մէջքը պոկած, Թերի, անմաքուր, Թերթեր տեղահան:

Տեղ. Սան. N° 61. ՄՏՄ, ԸՅ, Ժա-մայիւրք, ՀՂ 49-50, N° ՄՂԷ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Ժամագիրք (մի տետր սկզբից չկայ):

2. 122ա. Սաղմոսարան:

3. (Վերջում) Գովասանութիւն Սաղմոսին - Բանք Սաղմոսիս է պատուական, / Էջեայ հոգւովն աստուածական, / Որք ի յասէն օժարանան, / Արքայութեանն արժանանան... Դաւա մի արձակ ևւ պատուական, / Էջեայ ծագօք յոյժ պանազան, / Ոչ եղանակս միայն գարան, / Այլ անթառամ ժամս ամենայն:

4. 243ա. Տօնացոյց - Քաղցր ամսոյ հայոց ի մէկն ևւ զեկտեմբեր հոռմայեցոյ ի Բ, Բաղս երբայեցոյ ի Գ-ն: Աւետիք է Յովակիմայ ևւ Աննայի:

ՅԻՇԱՆԱԿԱՐԱՆ

ա. 227բ. [Գրչի] Փաւր... Տէր Յոհան կրօնաւոր ցանկացաւ այժմ տառի եւ իւրն զրեաց զդիրքս, որ առի Ատենի Սաղմոս... ևւ Լու յիշատակ իւրն ևւ ծնողաց իւրոց, ի դուռն Սուրբ Աստուածածնին մեծ անպատիս Տաքեւու հռչակաւոր ևւ սուրբ ուխտիս, ի Թիլի հայոց ՌՃԾ ևւ է (1708):

Դարձեայ յիւնցէք զմէղսամած զեփրիմ զրիւս, որ յոյժ փափաղանօք զրեցաւ ի ինդրոյ հոգեւոր եղբօրն մերոյ՝ տէր Յոհանին Զուգայեցոյ...

բ. 278բ. [Յետադա] ի ժամանակին, զոր զրեցաւ զԺամագիրքս, հայր ևւ վերստենաւ Սուրբ անապատիս զԲարսեղ աստուածարան վարդապետն, զոր Տէր Աստուած ընդ երկուսն աւուրս պաշտեցէ... Դարձեայ յիւնցէք զվերջին ստացող տօրին Ագուլեցի Ոսկանեց մահտեսի Հայրապետի որդի հանդուցեայ Ոսկանն, ևւ զիւր Նորարդարող ևւ կուսակրօն որդիքն, ի միւսմ վայրկեան ժամանակի ծովակուր Էղեայք յայեացն Պոնտոսի... եղև ի ՌՃՂ (1727) հարիթական Թոյս:

գ. 278բ. [Յետադա] [Նորդգիր] Ռ-զորմած հոգի Գալտօսի որդի Գեվորգն առաւ հս Ատենիս. Թիլի ՌՄԺԲ (1763):

ՄՈՎՍԷՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ, ԺՈՂՈՎԱԾՈՒ Ի ՊԷՏՍ ՔԱՐՈԶԻՑ

ԺԸ - XVIII

Թերթ՝ 100: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 14.5×10 : Գրութիւն՝ միասիւն (11×6,5): Գիր՝ նօտրգիր: Տող՝ 18-23: Կազմ՝ կաշեպատ տախտակ:

Վիճակ՝ քայքայուած:
Տեղ. Սան. N° 62. ՄՏՄ, ԸՑ, Մատենադիրներ, թղթ. 3, 42 1559, N° 4047:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մովսիսի Զուղայեցոյ ժառովածու ի պէտս քարոզից:

ԼԴ դուխ. Ժողովածուիս Ի-ԼԴ դուխ-ները ցանկում էւ Ա-Դ, Լ-Դ գլուխներ՝ բնագրում, յետոյ, տարբեր գրչով են գրած:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ա. [Յետադայ] ԹՎին ՌՄՀԶ (1827)-ին. Օղոստոսի Էրկուսին, ի ժամանակս Բ (2) թագաւորաց Պարսից Էւ Ռուսաց՝ բնդ միմեանս մարտնչեցան Գողթնեաց դատաւի բոլոր ժողովուրդ միահամուռ, հանդերձ միարանով, Էլեալ զնացոք զԷյ Թադեու վանքն. տեսանեմք, թէ Աստուած վերջենիս ուր կատարէ: Եւ Լս՝ կարապետ ապիկար արեղայս գրեցի Մեծ անապատին, բնդ հովանեաւ Սուրբ Աստուածածնոյ:

բ. Տա. (Կնիք) Քրիստոսի ծառայ տի-րացու Ղուկիւսնոս. 1210 (1761):

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

ՇԱԽՇ

ՌՁԵ - 1636

Գրիչ եւ ստացող՝ Խաչատուր Էրէց:

Թերթ՝ 102: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 15×10.2 : Գրութիւն՝ միասին (8×6,5): Գիր՝ նօտրգիր: Տող՝ 18: Մանրակարգութիւն՝ վերնադրերը կարմիր, խորան - փա: Կազմ՝ կաշեպատ տախտակ, զրոշմուած, փակիչով:

Տեղ. Սան. N° 63. ՄՏՄ, ԸՑ, Մատենադիրներ, թղթ. 3, 42 1481, N° 3835:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մխիթարայ Գոշի Մեկնութիւն երեւմայի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

101ա. Վերջին ստացողս գրող սորա շխաչատուր Էրէցս, որ գրեցի ի ԹՎականիս ՌՁԵ (1636), ի քաղաքն Շաշ. սխալանացն ներել՝ թողուի թիւն մեզ էւ ձեզ. Քրիստոս Աստուած ողորմեցի:

ՇԱՐԱԿՆՈՑ

ԲՈՆԱԿՈՐ

ՌՃԺԴ - 1665

Գրիչ՝ Մանուէլ զպիր:

Թերթ՝ 333: Նիւթ՝ մազաղաթ: Մեծութիւն՝ միասին (8.4×6,7): Գիր՝ բո-

ՆՈՐԴԵ (միջակ տեսակի): Տող՝ 21: Մանրակարգութիւն՝ հասարակ զարդ, զարդադրեր, վերնադրերը կարմիր. խորան -

47ա, 98, 127ա, 172բ, 216ա, 263բ, 287ա. նկարներ — Անտոն անսպասական՝ 31ա, Ստեփաննոս Նախավկայ՝ 34բ: Պահպանակ՝ 1 թերթ, մազադաթ, բոլորդիր, Տօնացոյց: Կազմ՝ կաշեղատ տախտակ:

Վիճակ՝ հնամաշ, անմաքուր, սկզբից թերի:

Տեղ. Սան. N° 64. ՄՏՄ, ԸՅ, Շարակ-նոցք, 42 131, N° ՇԼԴ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շարակնոց:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ա. 332ա. [Գրչի] Փառք... Գրեցաւ աւյ ի թվին հայոց ՌձԺԴ (1655) Ապրիլի ի Ժե (15), ձևամբ այս գրչիս Մանուէլ

գպրիւ, գրեցաւ ի յերկիրս Սիւնեաց, ի զեաւոյս Բոնակոք, ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորի: յիշեօջիք զհայրն իմ՝ Մարտոս քահանայն եւ զմայրն իմ՝ Մայրեան...

բ. 332բ. [Յետագայ] Փառք... Ես՝ տէր Ալեքսան երէցս, առի այս Շարակ-նոցս հալալ ընչից իմոց, յիշատակ հօրս իմ՝ Հայրապետին, եւ մօրս իմ՝ Հռոմմ-սիմին, եւ հանգուցեալ եղբարց իմոց՝ Բաղդասարին...

գ. 332բ. [Յետագայ] (նօտրորով նա-խորդին կցած) Յիւլիէք Ալեքսան Էրէցս, որդիքս իմ՝ Յակոբբան եւ Սահակ, եւ խաչատուրն... Ով որ այս Շարակնոցս թէ ծախելու լինի, կամ գրաւ զնելու լի-նի, թէ ասկական կամ թէ դաւում ծա-խելու լինի, Քրիստոսի ահեղ դատաստա-նին պարտական լինի:

14

ՇԱՐԱԿՆՈՑ

ԺԶ - XVI

Գրչի՝ Մազաքիս:

Թերթ՝ 393: Նիւթ՝ թուղթ: Մեծու-թիւն՝ 12,8 × 8,5: Գրութիւն՝ միասին (9 × 5,7): Գիր՝ բոլորգիր (գեղեցիկ): Տոպ՝ 21: Մանրամկարչութիւն՝ դարդ ու զարդադրեր, վերնադրերը կարծիր, քաղ-մաթիւ խորաններ եւ կիսախորաններ: Կազմ՝ չունի:

Վիճակ՝ ողբալի:

Տեղ. Սան. N° 65. ՄՏՄ, ԸՅ, էջ 93-94, N° 34:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. (Զունի) Խորհուրդ մեծ: Ե:

— Սուրբ Աստուածածին Մարիամ:

2. Ըղբեղ Աստուածածին, որ վերորհ-նես... — Աստուածածին եւ զմիշտ կոյսն, / Ըղբեղ աբշնութիւն մեծացուցանիմք: ԺԴ-ԺԵ:

Թղ. 58ա-ից յետոյ մի թերթ պոկուած է, ուստի պահպանում է Բուն ըաբիկենդա-նի շարականի սկիզբը:

3. Որ հայիս քաղցրութեամբ յարա-բածս քո, հայր ամենակալ... ԻԺ:

4. 68ա. Զանուն քո Օրհնեմք... ԻԸ:

5. ա. 75ա. Աւհրնեալ ես, Տէր Աս-տուած, հարցն մերոց...

բ. 78ա. Հարցն մերոց աւրհնեալ ես, Տէր, եւ փառաւորեալ յաւիտեան:

գ. 82ա. Աստուած հզաւր թաղաւոր. անմահ արարիչ յաւիտենից... ԻԹ:

6. ա. Փառաւորեալ անուն քո յաւի-տեան, Տէր Աստուած հարցն մերոց,

բ. 91ա. Սուրբ Աստուած, հայր ան-սկիզբն աշխարհի...

7. 99ա. Հարցն մերոց Աստուած, որ ապրեկոյցիք դերիս մանկունս ի հնոցի... ԼԳ:

8. 108բ. Աստուած հարցն մերոց... Աւրհնեալ Տէր Աստուած, հարցն: ԼԴ:

9. ա. 131բ. Արծաթասիրտութեամբ: ԽԲ:

բ. 139ա. [Ներսիսի Շնորհալույ՝ Նորոգող տիեզերաց:

գ. 144ա. Ճաղոյ գովեալք յիմանցն — Յարևա Քրիստոս ի մեռելոց: ԽԵ:

10. 135ա. Որ և կիր ի փրկութիւն վասն ազգի մարգկան:

11. 160ա. Որ յերկնից իջէր անսկիրն: ԽԹ:

12. 190ա. Յայս կիրակէտ Բ Ծաղկազարդ է — Մեծահաշտ այս խորհուրդ:

13. 192բ. Որ ամենազար զաւրուութիւն... ԾԵ:

14. 224ա. Կանոն սրբոյն Ներսէսի հայրապետի — Որ զլոյս անճառ շնորհաց աստուածային...:

15. 226բ. Սուրբ Սահակայ հայրապետին — Որ յարմատոց հարցն... ԽԶ:

16. 234ա. Շարական սուրբ Սանդուխտոյ կուսին — Քեւ պարծի այս ար սուրբ եկեղեցի... ԿԸ:

17. 255ա. [Կանովն երկրորդ աւուրն արհմութեան — Ճառագայթ փառաց հաւր, որդիդ միածին...] ՀԵ:

Սկզբից իմ թերթ կտրուած, թերի:

18. 258բ. ա. Նիկողայոսի հայրապետի — Հիւսիսն անմարմինն...:

բ. Կիրդի հայրապետի — Մանկունք նոր Սիովնի:

գ. Ստեփան Ուլմեցույ — Յրեծա այսաւր... ԴԳ:

19. 352ա. Երգ տեսն Ներսէսի Յաղագս Բնքեցելոց — Աստուած անեղ... ԴԹ:

20. 359ա. Երգեցէք Տեստն Երգ Նոր: Այս եւ հետեւայ Երգերի լուսանցեալում զորում եւն միայնակ կրտարուեր կամ ուղղակի վանկեր, որոնք կամ սկրուուսդ տան առաջին վանկն եւ. որ. «Նայ» — Նայեցայ եւ... զիշ, ծան, հոս, զիշ, եսա, ար, նեղ, արլ — եւ այդ կրթեալում է թղ. 356բ. մինչեւ թղ. 379բ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ա. 198բ. [Գրքի] Ով քահանայք եւ մարդազարդեալ պաշտօնայք, աղայեմ զձեղ, յորժամ քաղցր ձայնիւ եղանակէք եւ կամ զաղափարելով, եւ կամ տեսանելով, յիշեցէք ի մարգարայայ աղաթս ձեր զիս՝ զՄաղափաւս...:

բ. 328ա. [Գրքի]

Ով քահանայք մարդուկան, Քաւիչք մեղաց էք սրբազան, Ծունկս անկեալ իմ անպիտան, Ձձեղ աղայեմ կողկողական: Ի սուրբ յաղաթս ձեր մարդուկան, Ձիս յիշեցէք, որ անարժան, Մին ողորմեալ ցաղ կաթական, Միոց նա յիշիք արժան:

գ. [Մէջքին կոցրած թերթի վրայ] Շարական դրչի 428:

15

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԼԱՍՐԱԳԻ

ԺԶ — XVI

Թերթ՝ 202: Նիւր՝ թուղթ: Մեծութիւն՝ 25×19,5: Գրութիւն՝ երկսիւն (19×6): Գիր՝ րոյորդեր: Տոդ՝ 24: Մանրակաշտութիւն՝ սակաւթիւ զարդադրեր եւ զարդեր:

Վիճակ՝ անմարտ, թերի:

Տեղ. Սան. N° 66. ՄՏՄ, ԸՅ, Մատենազոյրներ, թղթ. 3, էջ 1970, N° 5264:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներսիսի Լամբրոնացույ Մեկնութիւն պատարագի:

Ձեռագիրս հատուած է մեծ ձեռագրի. սկզբից պակասում է ի տետր, պահուած է սկսած ԻԱ, տետրից. Մեկնութեան ԿԱ հատուածիցն է. «... անակելով յայտ առնեմք, թէ առ ի զիտաւորութիւն հաւ մարդարէիցն նախաճառութիւնք եւ եկեղեցալականաց խորհրդոցն կատարումն»: Վերջի պահուած հատուածն է. «ՃԻԸ. Վասն ի նոյն յարեալ: զարծեալ յորում, քէ գմբ ազգ ունիմ իշխանութիւն դատելի ոչ ոչ գայս — Ասէր Լրբեմն Երանելին Յոր տաղնապեալ...»:

Գրիշ՝ Ալիքսանդր:

Թերթ՝ 280: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ $14,5 \times 10$: Գրութիւն՝ միասին (11×6): Գիր՝ նօտրդիր (յաւ), ձայնա-նիւերով: Տաղ՝ 24: Մանրամկարչութիւն՝ զարդ, զարդադրեր, խորան - 68ա, 90ա, 128ա, 169, 220ա, 239ա, (մի քանիսը կիսախորան): Նկար - Յարութիւն Քրիստոսի՝ 89բ: Կազմ՝ չուշի:

Վիճակ՝ անմաքուր, թերի, խոնաւացած:

Տեղ. Սան. N° 66. ՄՏՄ, ԸՅ, Շարակ-նոցք, էջ 146, N° ՈՁԴ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շարակնոց:

Ունի յիշատակարան՝ 89բ, 168բ. երկրորդի մէջ յիշուած է Ալիքսանդրի անունը:

ԱԹԱՆԱՍ ԱՂԷՔԱՆԴՐԱՅԻ, ՃԱՌՔ ԵՒ ԹՈՒՂԹՔ

ՌՃԽԱ - 1692

Թերթ՝ 228. անդրէկ են՝ 1ա-4ա, 29ա, 210ա, 222ա-228բ: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 16×11 : Գրութիւն՝ միասին, կարմիր գծերում (11,5×6,8): Գիր՝ նօտրդիր: Տաղ՝ 23: Մանրամկարչութիւն՝ հատուածներն ունեն թռչնադրեր, լուսանշաղարդեր. խորան - 3ա, վերնագրերը կարմիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, զրոյմուած, ունի մի կապիչ:

Վիճակ՝ Էղծուած և զժուար ընթեր-նելի (206բ) մի թերթ կտրել են երեսում է. լիշատակարանի երեսին թերթ Լն փակցրել, որ կրկին պոկելիս վնասուել է նաև նախկին զրածը:

Տեղ. Սան. N° 69. ՄՏՄ, ԸՅ, Մատենադարան, թղթ. 1, էջ 64-65, N° 81:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 5ա. Մեծիմ սրբոյն Աթանասի եպիսկոպոսապետին Աղէքսանդրացոյ աւանդալ հալառակ բոլոր հերձուածոց - Զառաջիկայն, որ ըստ Յոհաննէս Աւետարանն է. ի սկզբանէ էր Բանն.

Համառօտ պատմելով Քրիստոսի մարգրէրութիւնն ու զործերը, զրում է արիա-նոսականներէ ղէմ. Վերջ հրէայք, մոյլ արիանոսք, ոյք ոչ ուղղապէս ընթերնոյք

և ոչ ստուգարար քննէք... ապա ճառ զբացի սոցին հոգեմարտն... առ թըշուտական Սամուատացին Պօղոս... առ մարտիրոս Մանիքեցիսն... առ Մարգիտն և Վաղենտին և Բասիլիդէս... առ Նաւատիանոս... առ Փուլպացիսն... առ Ապոլինարացիսն... »:

2. 16բ. Նորին սուրբ Աթանասի Առ լիրերիս եպիսկոպոսապետ Հռոմաց, զոր պահանջեաց ի նմանէ... գրեաց... Մի Աստուած, անմահ, աներևոյթ, անշուշտիւր...

3. 17բ. Նորին Աթանասի Յաղագս Սրբոյ Երրորդութեանն - Հաւատամք ի մի Աստուած:

«Այսք առաջիկայ հինգ ճառս տեսն Ստեփաննոսի է թարգմանեալ ի մեզ: Այս ծանօթութիւնը զրած է կարմրով իրբիւ մի տեսակ մաս հետեւեալ գլխի:

4. 22բ. Նորին Առ Յորիմանոս քաղաւոր Յաղագս հաստոյ - Տէրն մեր Յիսուս Քրիստոս ի վերայ մկրտութեանն:

5. 23ա. Նորին Հայր վառն հաւատոյ ըէ մի է Քրիստոս. ընդդէմ Պօղոսի Ամոսատացոյ - Պարտ է որք միանշամ ի հեթանոսականէն...

6. 29ա. Նորին. Յորվէ անձն իմ խռովեալ է — ի նմանութենէ Տեառն մերոյ Եփեսոսի Քրիստոսի:

7. 31բ. Նորին. Յաղագս յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի — Որք զՏէրն մեր Եփեսոս Քրիստոս:

8. 48ա. Նորին. Թուղք յաղագս Ամենասուրբ Հնգւոյն — Գիր քոյոյ բարեպաշտութեան:

9. 84բ. Նորին. Հետեւումն յառաջաւացեալոց յաղագս նոյն Ամենասուրբ Հնգւոյն — Թերեւս զարմանայցես:

10. Նորին. Գիր յանտիոբացւոց եկեղեցի — Յաղագս զանազան աստուածաբանութեանց եւ յուծմանց ճառիկ, զոր ասացեալ էր յընդդիմաբանից՝ Արիոսի հետեւացոյ:

11. 126ա. Նորին Թուղք առ Եպիկտոն եպիսկոպոսն Կորնթացոց. Յաղագս ուղղափառ հաւատոյ. ընդդիմամարտութիւն սակս յարուցելոց ումանց հակառակ ճշմարիտ սուրբ հաւատոյն — Եւ այսպէս վարկանելի, եթէ ամենայն ընդունայնաբանութիւնք:

12. 136բ. Նորին. Առ Փիլադելփոս եպիսկոպոս — Հանդիպեցաք որոց առ ի բումմէ աստուածապաշտութենէդ զրեցելոց:

13. 144ա. Նորին. Յաղագս խորհրդածութեան մկրտեցելոց, յարում եւ աստուածավայելչագոյն վարդապետութիւն — Արժան եւ վայելուչ է յաղագս Հանդերձեալ...

14. 164ա. Նորին. Ի չարչարանս եւ ի յարութիւն Տեառն մերոյ փրկչին Յիսուսի Քրիստոսի, մարմնացելոյն ճշմարտի Աստուծոյ մերոյ — Եկեալ ի տեղին կոչեցեալ Գողգոթայ:

15. 197բ. Նորին. Յաղագս կուսութեան — Կոյս կամիս ոչ որպէս գու կամիս, այլ որպէս կամի Քրիստոս:

